ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«17» նոյեմբեր 2022թ. §8 N 362/Ա

ք. Ստեփանակերտ

2022 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ՔՆՆԱՇՐՋԱՆԻ՝ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ (ԷՔՍՏԵՌՆ) ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի՝ 23.10.2012 թվականի N 181-Ն հրամանով հաստատված՝ «Դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգի» 20-րդ կետի և 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «2022 թվականի 2-րդ քննաշրջանի դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը»՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. 2022 թվականի բոլոր քննաշրջանների համար դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննություններ անցկացնելու իրավունքը վերապահել «Ստեփանակերտի Ա.Սախարովի անվան հ.8 միջնակարգ հոսքային դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

3. Քննություններն անցկացնել 2022 թվականի հունիսի 7-ից մինչև հուլիսի 6-ը ներառյալ:

4. Հրամանի կատարման ապահովումը հանձնարարել նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչության պետ Ռ. Մուսայելյանին:

5. Հրամանի կատարման վերահսկողությունը վերապահել ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:

Ա. Հակոբյան

Հավելված 1
Արցախի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի
2022 թ. 17 մարտի N 362/Ա հրամանի

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

2022 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ (ԷՔՍՏԵՌՆ) ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

(ՀՈՒՆԻՍ-ՀՈՒԼԻՍ ՔՆՆԱՇՐՋԱՆ)

1. Հիմնական կրթության վկայական ստանալու համար դրսեկները 2022 թվականի 2-րդ քննաշրջանի ընթացքում «Հայոց լեզու», «Համաշխարհային պատմություն», «Մաթեմատիկա», «Հայաստանի աշխարհագրություն», «Աշխարհագրություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» առարկաների քննությունները հանձնում են գրավոր:

1) Քննական թեստերը կազմում է Արցախի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնը (այսուհետ՝ ԳԹԿ)՝ առնվազն 4 թեստ յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 20 բալային համակարգով:

2) «Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատիկա», «ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն», «Ռուս գրականություն» (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար) «Օտար լեզու» («Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն», և այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ), «Հայոց պատմություն», «Գրականություն», «Ռուսաց լեզու» առարկաների քննությունները հանձնում են բանավոր: «Ֆիզկուլտուրա» առարկայից հանձնում են ստուգարք (նորմատիվների հանձնում): Քննական հարցատոմսերը կազմում են էքստեռն քննություններ ընդունող դպրոցի (այսուհետ՝ Դպրոց) համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 10 բալային համակարգով:

2. Միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար դրսեկները 2022 թվականի 2-րդ քննաշրջանի ընթացքում «Համաշխարհային պատմություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ), «Ռուսաց լեզու», «Հայոց պատմություն», «Մաթեմատիկա», «Հայոց լեզու և գրականություն» առարկաների քննությունները հանձնում են գրավոր:

1) Քննական թեստերը կազմում է ԳԹԿ-ն՝ առնվազն 4 թեստ յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 20 բալային համակարգով:

2) «Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատիկա», «ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն», «Ռուս գրականություն» (ռուսերենով

ստացած դրսեկների համար) առարկաների քննությունները հանձնում են բանավոր: «Ֆիզկուլտուրա» առարկայի ստուգարքն անցկացվում է նորմատիվների հանձնմամբ: Քննական հարցատոմսերը կազմում են Դպրոցի համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 10 բալային համակարգով:

3. Դրսեկության ձևով (ավարտական՝ ուսումնական պլաններով նախատեսված առարկաներից) քննությունները դրսեկները հանձնում են՝ համաձայն ժամանակացույցի:

4. Հարցատոմսերով կազմակերպվող բանավոր քննությունների անցկացման ժամանակ յուրաքանչյուր դրսեկ վիճակահանությամբ ստանում է առանձին առաջադրանք (հարցատոմս): Դրսեկը բանավոր քննություններին նախապատրաստվելիս կարող է կատարել գրավոր համառոտագրում:

Դրսեկության ձևով քննությունների արձանագրությունները և գրավոր աշխատանքները պահպանվում են Դպրոցում, ավարտական փաստաթղթերը ստանալուց հետո՝ մեկ տարի:

5. Հիմնական կրթության վկայականում և միջնակարգ կրթության ատեստատում ավարտական և պետական ավարտական քննական առարկաները գնահատվում են 20 բալային համակարգով, իսկ տարեկան գնահատականները նշանակվում են՝ 20 բալային համակարգից գնահատականները վերածելով 10 բալային համակարգի:

Բանավոր քննությունները գնահատվում են 10 բալային համակարգով և համարվում են տարեկան գնահատականներ:

6. Գնահատականները գրանցելիս գնահատման 20 բալային համակարգից 10 բալային համակարգին անցման համապատասխանությունը կատարվում է համաձայն հետևյալ աղյուսակի.

8-9 միավոր - 4	16-17 միավոր - 8
10-11 միավոր - 5	18-19 միավոր - 9
12-13 միավոր - 6	20 միավոր - 10
14-15 միավոր - 7	

7. Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպելու և անցկացնելու գործընթացը վերահսկվում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:

Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 23.10.2012 թվականի N 181-Ն հրամանով հաստատված «Դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու» կարգի և սույն աշխատակարգի պահանջների համաձայն:

Հավելված 2
Արցախի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի
2022 թ. N հրամանի

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

2022 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ (ԷՔՍՏԵՌՆ) ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Հիմնական կրթության վկայական ստանալու համար քննությունների կազմակերպման ժամանակացույց

(հունիս-հուլիս քննաշրջան)

	Առարկա	*քննության անցկացման եղանակը*	*քննությունների անցկացման օրերը*
1.	Ֆիզկուլտուրա	ստուգարք (նորմատիվների հանձնում)	07.06.2022թ.
2.	Հայոց պատմություն	բանավոր	08.06.2022թ.
3.	Համաշխարհային պատմություն	գրավոր	09.06.2022թ.
4.	ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն	բանավոր	10.06.2022թ.
5.	Գրականություն	բանավոր	13.06.2022թ.
6.	Հասարակագիտություն	բանավոր	14.06.2022թ.
7.	Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն)	բանավոր	16.06.2022թ.
8.	Ֆիզիկա	գրավոր	17.06.2022թ.
9.	Հայաստանի աշխարհագրություն	գրավոր	20.06.2022թ.
10.	Քիմիա	գրավոր	21.06.2022թ.
11.	Աշխարհագրություն	գրավոր	24.06.2022թ.
12.	Հայոց եկեղեցու պատմություն	բանավոր	27.06.2022թ.
13.	Հայոց լեզու	գրավոր	28.06.2022թ.
14.	Ինֆորմատիկա	բանավոր	29.06.2022թ.
15.	Մաթեմատիկա	գրավոր	30.06.2022թ.
16.	Ռուսաց լեզու	բանավոր	01.07.2022թ.
17.	Կենսաբանություն	գրավոր	04.07.2022թ.
18.	Ռուս գրականություն (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար)	բանավոր	06.07.2022թ.

* ***Քննությունների սկիզբը՝ ժամը 14:00-ին***

2. Էքստեռն կարգով միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար քննությունների կազմակերպման ժամանակացույց

(հունիս-հուլիս քննաշրջան)

	Առարկա	*քննության անցկացման եղանակը*	*քննությունների անցկացման օրերը*
1.	Ֆիզկուլտուրա	Ստուգարք (նորմատիվների հանձնում)	07.06.2022թ.
2.	Հայոց լեզու և հայ գրականություն	գրավոր	08.06.2022թ.
3.	Համաշխարհային պատմություն	գրավոր	09.06.2022թ.
4.	ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն	բանավոր	10.06.2022թ.
5.	Հասարակագիտություն	բանավոր	14.06.2022թ.
6.	Հայոց պատմություն	գրավոր	15.06.2022թ.
7.	Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ)	գրավոր	16.06.2022թ.
8.	Ֆիզիկա	գրավոր	17.06.2022թ.
9.	Աշխարհագրություն	գրավոր	20.06.2022թ.
10.	Քիմիա	գրավոր	21.06.2022թ.
11.	Մաթեմատիկա	գրավոր	22.06.2022թ.
12.	Հայոց եկեղեցու պատմություն	բանավոր	27.06.2022թ.
13.	Ինֆորմատիկա	բանավոր	29.06.2022թ.
14.	Ռուսաց լեզու	գրավոր	01.07.2022թ.
15.	Կենսաբանություն	գրավոր	04.07.2022թ.
16.	Ռուս գրականություն (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար)	բանավոր	06.07.2022թ.

* ***Քննությունների սկիզբը՝ ժամը 12:00-ին***